ՈՒՂԵՑՈՒՅՑ

9-րդ դասարանի ավարտական քննության

Ուղեցույցի նպատակն է օգնել հանրակրթական հիմնական դպրոցի 2023-2024 ուստարվա Տավուշի մարզի 9-րդ դասարանցիներին՝ արդյունավետ նախապատրաստվելու «Ֆիզիկա» առարկայի ավարտական քննությանը և կողմնորոշելու ուսուցիչների գործունեությունն այդ ուղղությամբ:

Քննական թեստը կազմվում է հանրակրթական հիմնական դպրոցի «Ֆիզիկա» առարկայի չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ գործածվող դասագրքերի հիման վրա: **Թեստում ընդգրկված են նաև գործնական ունակությունները և լաբորատոր աշխատանքներ կատարելու կարողություններն ստուգող առաջադրանքներ:**

1. Առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Թեստի առաջադրանքները ներկայացված են ընտրովի պատասխանով, կարճ և ընդարձակ պատասխան պահանջող:

Ներկայացման ձևը	Առաջադրանքի համարը	Ընդհանուր միավորը
Ընտրովի պատասխանով	1-22	22
Կարճ պատասխանով	23-30	4
Ընդարձակ պատասխանով	31-35	5
ԸՆԴԱՄԵՆԸ	**1-35**	**35**

Քննական թեստի առաջադրանքները կատարելուց հետո աշակերտը պետք է լրացնի պատասխանների ձևաթուղթ, որի ճիշտ լրացումից է կախված նրա քննական արդյունքը:



Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելիս տրված 4 պատասխանից պետք է ընտրել միակ ճիշտ պատասխանը և պատասխանների ձևաթղթի տվյալ առաջադրանքի համապատասխան վանդակում կատարել «×» գրառումը (նկ.):

Կարճ պատասխան պահանջող յուրաքանչյուր առաջադրանքի (ենթաառաջադրանքի) պատասխանը (բառ, բառակապակցություն, թիվ, թվային արժեք՝ չափման միավորով) պետք է գրել պատասխանների ձևաթղթում՝ դրա համար առանձնացված տեղում (**օր.՝** մագնիս, կինետիկ էներգիա, 12, 45 կգ, 21 մ/վ և այլն): **Պատասխանը պարտադիր պետք է բերված լինի միավորների ՄՀ համակարգի, եթե առաջադրանքում լրացուցիչ հրահանգ չկա:**

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները կատարելու համար թեստ-գրքույկի համապատասխան տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել առաջադրանքի կատարման ողջ ընթացքը (**կատարվող բոլոր քայլերի գրանցումով, պահանջվող բանաձևերով, մաթեմատիկական հաշվարկներով և պատասխանի ստացումով**):

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները պետք է կատարել թեստ-գրքույկի համապատասխան տեղում ***(չեն անցկացվում պատասխանների ձևաթուղթ):***

Աշակերտն ունի սխալ նշած պատասխանն ուղղելու 4 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով, 2-ը՝ կարճ պատասխան պահանջող առաջադրանքների: Եթե անհրաժեշտ է փոխել սխալ նշված պատասխանը, ապա պատասխանների ձևաթղթի՝ սխալ նշված պատասխանները փոխելու տեղում անհրաժեշտ է նշել առաջադրանքի համարը և համապատասխան վանդակում գրառել «**X**» նշանը կամ գրել կարճ պատասխանը:

2. Առաջադրանքների բաշխումն ըստ դասընթացի բաժինների

Ստուգվում են աշակերտի գիտելիքներն ու կարողությունները ծրագրով նախատեսված բոլոր բաժիններից՝ հետևյալ մոտավոր համամասնություններով.

Հ/հ	Թեմա	Միավորներ
1	Մեխանիկական երևույթներ	16
2	Ջերմային երևույթներ	6
3	Էլեկտրամագնիսական երևույթներ	6
4	Օպտիկական երևույթներ	3
5	Ատոմային միջուկի կառուցվածքը	2
6	Աստղագիտություն	2
	ԸՆԴԱՄԵՆԸ	**35**

3. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները

Առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքների՝ պատասխանների ձևաթղթում ջնջումներով կատարված ***ուղղումների համար միավոր չի տրվում:***

Եթե թեստ-գրքույկում բացակայում է ընդարձակ պատասխաններով առաջադրանքների լուծման ընթացքը, ապա ***միայն պատասխանի գրառման համար միավոր չի տրվում:***

Թեստ-գրքույկը և պատասխանների ձևաթուղթը լրացվում են **կապույտ գրիչով,** իսկ ստուգումը կատարվում է **կարմիր գրիչով:**

4. Աշխատանքի համար հատկացվող ժամանակը

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 120 րոպե:

5. Ցուցումներ

ա) Բոլոր այն առաջադրանքներում, որտեղ հատուկ վերապահում չկա, թվաբանական հաշվարկները հեշտացնելու և պատասխանների միարժեքությունն ապահովելու նպատակով, պետք է ընդունել. $\pi = 3{,}14$; $\pi^2 = 10$; $\sqrt{2} = 1{,}4$; $\sqrt{3} = 1{,}7$, իսկ g =10 Ն/կգ: